

Հաստատված է

ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
-----թ. թիվ ----- որոշմամբ

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

Կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն <<Հայաստանի հանրային ռադիոընկերության>> ՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով, ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կարիքների համար գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ՝ Կարգ/ պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված գնման գործընթացին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց /այսուհետ՝ նաև Մասնակից/ տեղեկացնելու գնման գործընթացի պայմանների՝ գնման առարկայի, գնման գործընթացի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու գնման գործընթացի հայտը պատրաստելիս:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան 20.09.2017թ ժամը 16:00-ը, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով:

Գնման գործընթացի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գնման գործընթացի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՄԱՍ I
1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում կահույքի ձեռքբերումը:

Կահույքի բնութագիրը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N6 հավելվածում:

2. Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները, դրանց գնահատման կարգը

2.1 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) ֆինանսական միջոցներ,

Ընդ որում մասնակցի՝

- «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի			
Առարկան	Ժամալը	գումարը (դրամ)	պատվիրատուի անվանումը և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3	4
Տարեթիվ՝ թվական			
1.			
2.			

2) մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով մատուցել է գնման առարկա հանդիսացող ապրանքների ձեռքբերման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

- Ֆինանսական միջոցներ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին. (հավելված 3.2).,

2) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) որոնք ներառված են Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության կողմից <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

4) որոնք ներառված են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի /այսուհետ լիազոր մարմին/ կողմից հաստատված Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցը երեք տարի ժամկետով ընդգրկվում է լիազորված մարմնի կողմից հաստատված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

5) Գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ

6) Որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագրի կնքելուց:

2.3 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր

3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Մասնակիցին իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ:

3.2 Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի I մասի 3.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետից առնվազն հինգ օրացուցային օր առաջ կարող են հրավերում կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող տպագիր մամուլում: Սույն ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին մամուլում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում հայտ ներկայացրած մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

3.5 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

4. Հայտը ներկայացնելու կարգը

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է: Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ «Հայտերը պատրաստելու» հրահանգում:

Մասնակիցը չի կարող նույն գնման գործընթացին ներկայացնել մեկից ավելի հայտ:

4.2 Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, 20.09.2017թ. ժամը 16:00-ը, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով: Հայտերը ստանում և գրանցամատյանում գրանցում է Լուսինե Դավլաթյանը (հեռ. (010) 552162 /124/): Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Լուսինե Դավլաթյանն է: Հայտերը գրանցվում են գրանցամատյանում, ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն.

բ. գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ և մեկ պատճեն.

գ. հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ և մեկ պատճեն.

դ. սույն հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշների մասին տվյալները (փաստաթղթերը)՝ մեկ բնօրինակ.

ե. էլեկտրոնային փոստի հասցեն.

4.4 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված կամ այլ կերպ ներկայացված հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը

5.1 Հայտը վավեր է մինչև «Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության» կարիքների համար գնումների գործընթացի կազմակերպման կարգին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը: Հայտի փոփոխման մասին ծանուցումը ուղարկվում է կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի «Հայտը պատրաստելու» հրահանգի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացվելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

6. Հայտի ապահովումը

6.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միախորհրդանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի օրինակելի ձևը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածով:

6.2 Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագրի կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին սովորական կարգից հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.3 Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Կարգին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.4 Սույն հրավերի 3-րդ բաժնին համապատասխան՝ սույն հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտեր ներկայացրած Մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը, կամ ներկայացնել հայտի նոր ապահովում: Հակառակ դեպքում հայտը մերժվում է:

7. Հայտերի բացումը

7.1 Հայտերի բացումը կատարվի գնահատող հանձնաժողովի՝ (այսուհետև՝ Հանձնաժողով) հայտերի բացման նիստում՝ 20.09.2017թ. ժամը 16:00-ը, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով: Մասնակիցը կամ նրա ներկայացուցիչը կարող է ներկա գտնվել գնահատող հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճեններ, որոնք տրամադրվում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

7.2 Հայտերի բացումն իրականացվելու է Կարգի համաձայն, այդ թվում հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

ա) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը /անունը/,

բ) տեղեկություններ Հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ Հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ,

գ) տեղեկություններ բացված յուրաքանչյուր ծրարում Հրավերով պահանջվող փաստաթղթեր առկայության վերաբերյալ ,

դ) տեղեկություններ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին,

ե/ յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը՝ տառերով և թվերով արտահայտված,

զ/ տեղեկություններ Հայտերի հետ կանչման կամ փոփոխությունների մասին,

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով և այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկված գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Հայտերը գնահատելիս առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ, որոնք հնարավոր է չափել դրամական արտահայտությամբ: Ընդ որում, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակցին որոշելու համար գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետի դ) ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Առաջարկվող գները ներկայացվում է ազգային արժույթով՝ ՀՀ դրամով:

7.4 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ, երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

7.5 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում՝

1) ընտրված մասնակցին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

2) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

3) բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը:

4) յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

5) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

6/ գրավոր տարբերակով ծանուցման դեպքում ծանուցումը ուղարկվում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, կամ մասնակիցներին հանձնվում է առձեռն՝ նշելով վերջինիս կողմից դրա ստացման ամսաթիվը:

7.6 Հայտերի բացման նիստին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

7.7 Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հետո առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ հանձնաժողովին է ներկայացնում իր՝ սույն հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող՝ սույն հրավերին համապատասխան նախատեսված փաստաթղթերը (տեղեկություններ):

8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը

8.1 Սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝ հանձնաժողովը գնահատում է ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը սույն հրավերով սահմանված պահանջներին:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում՝ հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ քարտուղարը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար:

2) չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

8.2 Ներկայացված փաստաթղթերը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 8.1 կետով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) համապատասխանում են սույն հրավերով նախատեսված պահանջներին: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.3 Սույն հրավերի 8.2 կետի համաձայն գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

8.6 Գնահատողը հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա գնման գործընթացներին տվյալ մասնակցի մասնակցությունը դադարեցվում է:

8.7 Սույն հրավերի 8.6 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.8 Պայմանագիր կնքվելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են գնման ընթացակարգի արդյունքները: Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են Գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.9 Եթե գնահատող հանձնաժողովի անդամը և (կամ) մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք /հատուկ կարծիք/, ապա դա ներկայացնում է գրավոր նիստի ընթացքում, որը կցվում է նիստի արձանագրությանը:

9. Պայմանագրի կնքումը

9.1 Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելու հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն էլեկտրոնային եղանակով ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիրը կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և ներկայացնում պայմանագրի ապահովում, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը 5 օրացուցային օր է:

9.3 Մինչև սույն հրավերի 9.2 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկված գնի ավելացմանը:

10. Պայմանագրի ապահովումը

10.1 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

10.2 Պայմանագրի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին՝ պայմանագրի կատարման, ներառյալ պայմանագրով նախատեսված երաշխիքային ժամկետի ավարտից հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում:

11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

11.1 Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

ՄԱՍ II

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՅՏՏՐ ՊԱՏՏԱՊԵՏՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:
1.2 Հայտը, ներառյալ դրանում ներառվող բոլոր փաստաթղթերը, պետք է կազմված լինեն հայերեն:

2. Հայտը

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը՝ սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

2.2 Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված (եթե կիրառելի է)՝

ա. պարզեցված ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված 1).

բ. հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին (հավելված 2).

գ. հայտարարություն՝ հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին (հավելված 3), պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում մասնակիցը պարտավորվում է ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները պայմանագրերի պատճեններ և բանկային տեղեկանք դրամական մնացորդների վերաբերյալ).

դ. գնի առաջարկ, որը ներառում է ինքնարժեքի հաշվարկ (վաճառքի ինքնարժեք), շահույթ և անուղղակի հարկերի ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման.

ե. հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (հավելված N 5).

զ. էլեկտրոնային փոստի հասցեն (հավելված 1):

2.3 Հայտում ներառվող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <բնօրինակ> և <պատճեն> բառերը: Ծրարը և դրանում ներառված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակիցը կամ վերջինիս կողմից լիազորված անձը /այսուհետ Գործակալ/: Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

2.4 Սույն հրահանգի 2.3 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) պարզեցված ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Հավելված 1
ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու առաջարկ

_____ Հայտնում է , որ ցանկություն ունի մասնակցելու
Մասնակցի անվանումը(անունը)

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ կողմից ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգին և հրավերի պահանջների համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
(Մասնակցի անվանումը) (էլեկտրոնային փոստի հասցեն)

_____ (ստորագրությունը)
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անունը, Ազգանունը)

Կ.Տ.

_____ 2017թ.
(ամսաթիվը, ամիսը)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների

համապատասխանության մասին

_____ -ն հայտարարում է, որ՝

Մասնակցի անվանումը

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ.

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) _____ -ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին

Մասնակցի անվանումը

նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

4) _____ -ն ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

Մասնակցի անվանումը

չունեցող մասնակիցների ցուցակում.

5) _____ -ն ներառված չէ լիազոր մարմնի կողմից հաստատված գնումների

Մասնակցի անվանումը

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2017թ.
(ամիսը, ամսաթիվը)

ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերով նախատեսված որակավորման պահանջներին
համապատասխանության մասին

_____ -ն հայտարարում է, որ՝
Մասնակցի անվանումը /անունը/

ունի կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
- 2) ֆինանսական միջոցներ,

_____ -ն պարտավորվում է առաջին տեղը
Մասնակցի անվանումը /անունը/

գրադեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել սույն հայտարարությունը
հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակցի անվանումը /անունը/ (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2017թ.
(ամիսը, ամսաթիվը)

ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**«Մասնագիտական գործունեության համախառնասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը»
որակավորման չափանիշին համապատասխանության մասին**

Սույնով _____ ն հավաստում է, որ

Մասնակցի անվանումը /անունը/

հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Նախկինում կատարած պայմանագրերի				
N	Առարկան	Ծավալը	Գումարը (դրամ)	Պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3	4	5
Տարեթիվը՝թվական				
1.				
2.				
...				
Տարեթիվը՝թվական				
1.				
2.				
...				
Տարեթիվը՝թվական				
1.				
2.				
...				

Մասնակցի անվանումը /անունը/(ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

(ամիսը, ամսաթիվը) 2017թ.

ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին

_____ - ն
պարզեցված ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) հավաստում է, որ ունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ
ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար:

Պահանջի դեպքում պարտավորվում եմ ներկայացնել _____ բանկի կողմից տրված տեղականքը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2017թ.
(ամսաթիվը, ամիսը)

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով ՀՀՌ-ՊԸԱԶԲ -17/24 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____ առաջարկում է պայմանագիրը

Մասնակցի անվանումը

կատարել հետևյալ գնով՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք (վաճառքի ինքնարժեք) տառերով և թվերով	Շահույթ տառերով և թվերով	ԱԱՀ* տառերով և թվերով	Ընդամենը գինը (ՀՀ դրամ) տառերով և թվերով	Գինը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ) տառերով և թվերով
1	2	3	4	5	6=3+4+5	7=6-5
1	Ալթոն					
2	Փոքր սեղան					
Ընդամենը						

- 5-րդ սյունյակը լրացվում է, եթե մասնակիցը ավելացված արժեքի հարկ վճարող է:

 Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

 (ստորագրությունը)

Կ. Տ.

 2017թ.
 (ամիսը, ամսաթիվը)

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24

..... 2017թ.

«.....» ՄՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն-յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ (այսուհետև՝ Ռադիոընկերություն) կողմից կազմակերպված՝ ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով գնման գործընթացին, պետք է ներկայացնի հայտի ապահովում և գնման գործընթացին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Ռադիոընկերության կողմից կազմակերպված ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 գնման գործընթացին Ընկերության մասնակցելուց բխող՝ Կարգի և գնման գործընթացի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Ռադիոընկերությանը վճարում է տուժանք՝ (տառերով) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Ռադիոընկերությունն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունն անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Ռադիոընկերությանն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<.....>> բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<.....>> ՄՊԸ-ն հանձնարարում է <<.....>>բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Ռադիոընկերության առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից ու գործում է ՀՀՌ-ՊԸԱԶԲ-17/24 ծածկագրով հրավերի վավերականության ընթացքում:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Ռադիոընկերության գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն՝, բանկային վավերապայմանները

«.....» ՄՊԸ
հասցեն՝
«.....» բանկ»
h/h
ՀՎՀՀ.....

տնօրեն

Ստորագրություն

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌ- ՊԸԱԶԲ -17/24

ք. Երևան

----- **2017թ.**

<< >>ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն -----, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մի կողմից, և <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>>ՓԲ ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Մ.Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով Գնորդին հանձնել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված բնութագրով սահմանված կահույքի (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Մատակարարն Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված ժամկետում և ծավալով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի պայմաններին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ, պահանջել Մատակարարից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.2 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել հանձնված Ապրանքից և պահանջել վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

3.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է սույն պայմանագրի պայմանները՝

3.1.4.1 Մատակարարի կողմից պայմանագրի պայմանների խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

3.1.5 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,

3.2.2 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Մատակարարն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը,

3.3.2 Գնորդից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

3.3.3 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագրի պայմանները՝

3.3.3.1. Գնորդի կողմից պայմանագրի պայմանների խախտելն էական է համարվում, եթե խախտվել է Ապրանքի համար վճարման ժամկետները:

3.4 Մատակարարը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում,

3.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում,

3.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,

3.4.4 Գնորդին հանձնել սույն պայմանագրի թիվ 1 և 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,

3.4.5 առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը,

3.4.6 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,

3.4.7 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը,

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի գինը կազմում է -----/-----/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Սույն պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը, ներառյալ ԱԱՀ, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածում:

4.3 Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն համաձայնագրով:

4.4 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.5 Վճարումը կատարվում է սույն պայմանագրի 6 կետում նշված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրն երկկողմանի ստորագրելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում:

5. Ապրանքի հանձնումը և ընդունումը

5.1 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

5.2 Մատակարարն Ապրանքը հանձնելիս Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի երկուական օրինակ:

5.3 Գնորդը՝ հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը ստանալու պահից երկու օրվա ընթացքում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի մեկական օրինակները կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման ակտն երկկողմանի ստորագրելու պահից:

5.5 Ապրանքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի դիմաց Գնորդին է անցնում սույն պայմանագրով սահմանված կարգով Ապրանքի հանձնման-ընդունման ակտն երկկողմանի ստորագրելու պահից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և մատակարարման ժամկետների համար:

6.2 Մատակարարի կողմից սույն պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ սահմանված ժամկետում չմատակարարված ապրանքի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով:

6.3 Սույն պայմանագրի 6.2 և 6.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարներից:

6.4 Սույն պայմանագրով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանքի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

6.5 Գնորդի կողմից սույն պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը <<ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ>>

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ կատարումը:

8.2 Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ:

8.3 Սույն պայմանագրի թվով երկու հավելվածները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.4 Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերն ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները
Գնորդ **Մատակարար**

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 5
ՀՎՀՀ՝ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
h/h 247010347780000

<< >> ՍՊԸ
Հասցե՝ -----
ՀՎՀՀ՝ -----
բանկ >>
Հ/Հ -----

Գործադիր տնօրեն՝
_____ Մ. Գրիգորյան

Տնօրեն՝

« » ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն -----, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ (այսուհետև՝ Ռադիոընկերություն) կողմից կազմակերպված՝ ՀՀՈ-ՊԸԱԶԲ -17/24 ծածկագրով պարզեցված ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և նշված ընթացակարգի շրջանակներում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀՀՈ- ՊԸԱԶԲ -17/24 » ծածկագրով պարզեցված ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում կնքվելիք մատակարարման գնման N° «ՀՀՈ- ՊԸԱԶԲ -17/24 » պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ-ին վճարում է տուժանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 10%-ի չափով՝ ----- (-----) ՀՀ դրամի չափով:

1.2 <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ-ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ-ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Ընկերության բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է <<Ընկերության բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ-ի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև վերը նշված պայմանագրի կատարման վերջնաժամկետը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ-ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն՝, բանկային վավերապայմանները

« » ՍՊԸ
Հասցեն՝ -----
«..... բանկ»
h/h
ՎՎՀՀ.....

տնօրեն -----

Ստորագրություն

Մատակարարման ենթակա կառույցի բնութագիրը

Հ/Հ	Անվանում	Չափ	Նյութ	Քանակ
1	Աթոռ	110երկ. x 50լայն. x 45բարձ. /սմ/	Կաշվե կամ կաշվե որակյալ փոխարինիչով փափուկ նստատեղ, որակյալ սպունգով, երկաթյա ծավիղ ոտքեր՝ պլաստմասե կաղապարով, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ	Հատ 21
2	Փոքր սեղան	110երկ. x 50լայն. x 60բարձ. /սմ/	Մուգ լամինատ, ուղղանկյունաձև գույնը և ձևը նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ	Հատ 6

Գնորդ

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ
 Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 5
 ՀՎՀՀ՝ 01541435
 <<Արդշինբանկ>> ՓԲԸ
 հ/հ 247010347780000

Գործադիր տնօրեն՝
 _____ Մ. Գրիգորյան

Մատակարար

<< _____ >> ՍՊԸ
 Հասցե՝ _____
 ՀՎՀՀ՝ _____
 << _____ բանկ >>
 Հ/Հ _____

Տնօրեն՝

Մատակարարման ենթակա կահույքի գինը և մատակարարման ժամկետը

Անվանումը	Չ/Մ	քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/, ներառյալ հարկերը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/, ներառյալ հարկերը
Աթոռ	Հատ	21		
Փոքր սեղան	Հատ	6		
Ընդամենը				

Կահույքի ձեռք բերման վերջնական ժամկետ է սահմանվում 2017թ. հոկտեմբեր 20 -ը:

Գնորդ

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ
 Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 5
 ՀՎՀՀ՝ 01541435
 <<Արդշինբանկ>> ՓԲԸ
 հ/հ 247010347780000
 Գործադիր տնօրեն՝
 _____ Մ. Գրիգորյան

Մատակարար

<< _____ >> ՍՊԸ
 Հասցե՝ _____
 ՀՎՀՀ՝ _____
 << _____ բանկ >>
 Հ/Հ _____
 Տնօրեն՝
